յին և ճինչլլէմին պատիժ տային ի բռնաւորացն, այլ եկեալ օրս ինչխանացն յեկեղեցեաց, և ոչ արարին: Եւ ել Մարտիրոս վարդապետն գնաց ի Պուրսա վասն այս բանիցս և վասն Մուղնեցուն, որ ասացին թէ ի Պուրսա յէրս (?) մի գնալ: Եւ յետ կէս աւուրս մին չաւուշ մի արզուհալ բերեալ թէ Զայս մինն բերաւ եւ ի մեզ տւաւ: Եւ կարդալ տվին թէ ի մեր մէջն Ս. սեւագլուխ կայ և ի մանկութենէ տաճկացեալ է, լաւն զայս ոմանք և գնացին այսչափ դրամ խարճեցին և զայս մոռացուցին. ահա զայս վէզիրին իմացուցէ՛ք, և այլ ինչ այսպիսիք. արարեալ զայս չար Կարապետին: Օրս պոռնիկ Մղտեսի Բարղամն բերին ի մօտակայ ճանապարհէն, որ անդ մեռեալ էր՝ եկեալ յԵրուսաղէմէ, և թաղեցին: Երեկոյիս Տաճիկքն զկանթեղ մինարիցն վառեցին, որ սահմանեալ են ի սկզբանէ ի նշան զպահս իւրեանց պահելոյ:

Առաւօտուս Շաբաթ (14 Յունի.) *Սէյտի Ահմէտն ել գնաց ի Սիլիստրա, տւեալ թագաւորին զայն պարոնութիւն:*

Կիրակի օրս (15 Յունի.) *պապան մեր հիւանդ էր եւ անդ գնացի եւ եկի ի Մղտեսոնցն եւ գեղացի Տէր Պետրոսն, եւ ել գնաց զճանապարհս իւր: Երեկոյիս Պալաթու Մայրամն եկաւ ի Մղտեսոնցն: Եւ օրս զծառան առաւ Մղտեսին: Բարեկենդան Սուրբ Լուսաւորչի: Եւ օրս զՎէհրէտն հանեալ ի տէզկեահէն եւ եդին զԳրիգորն տէզկեահտար:*

Գշի (17 Յունի.) *երեկոյիս Մարտիրոս վարդապետն եկաւ ի Պուրսայու և Մուղնեցին անդ ոչ է գնացեալ, այլ ի Կէլիպօլի եկեալ, և Պուրսացիք և քաղաքացիքս թուղթ յղեալ անդ և յամենայն սահմանս ծովեզրի թէ Լիջի՛ք հեռի ի յայնմանէ: Եւ Մովսէս վարդապետն վարեալ յեկեղեցոյն Պուրսայու, քանզի աստի ուղարկեալ թղթոյն ոչ է հաւատացեալ, մինչեւ*